ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Աբովյան** **12/09/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/1
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամ:

Բացակայում էին՝ Դավիթ Զարոյանը (գտնվում է արձակուրդում), Գևորգ Պողոսյանը (գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում), Կարեն Սերոբյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Մերուժան Մելիքսեթյանը, Աննա Չոբանյանը, Արամ Վիրաբյանը, Դիաննա Երեմյանը

**Նիստը վարում էր Համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանը**

**Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար Վանիկ Բաբաջանյանը**

Նախքան նիստի օրակարգը ներկայացնելը Վ.Բաբաջանյանը ներկայացրեց Աբովյան համայնքի ավագանու «Հանրապետութուն» խմբակցության անդամ Հայկ Հարությունյանի դիմումը այն մասին, որ հետայսու նույն խմբակցության ղեկավարը հանդիսանում է ինքը, իսկ քարտուղար՝ Վ. Մամուլյանը:

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի յոթերորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի հետևյալ օրակարգը.
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու

2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձին տրվող շնորհագրի նկարագրությունն ու նմուշը սահմանելու մասին.

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի մեդալի նկարագրությունն ու նմուշը սահմանելու և Աբովյան համայնքի մեդալով պարգևատրման կարգը հաստատելու մասին.

4) Գագիկ (Տեր Մաշտոց քահանա) Գրիգորի Բաբայանին Աբովյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին.

5) «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 204-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

7) «Ա.Ա.Բ. Պրոեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

8) «ԼԻ ԱՆԻ Դայմոնդս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի N 102-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 22-ի N 123-Ա և N 124-Ա որոշումներով հաստատված ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերին 2025 թվականի բյուջետային տարվա համար համաձայնություն տալու մասին.

11) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հրավերի վերաբերյալ.

12) Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ներհամայնքային ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.

13) Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.

14) Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ներհամայնքային (տեղական նշանակության) մայթերի ասֆալտբետոնե ծածկով հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.

15) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 217-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

16) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության

իրավունքով տրամադրելու մասին.
17) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0349 կադաստրային ծածկագրով հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին.
18) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի հանրակացարանային թաղամասի 7 շենքի թիվ 80, 81 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
19) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Բալահովիտ գյուղի 1-ին փողոցի 3 շենքի թիվ 14 բնակարանն անհատույց օտարելու մասին.
20) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրակցված շենքից անհատույց տարածք տրամադրելու մասին.
21) Աբովյան համայնքի «Վերին Պտղնի գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին.
22) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 9 հասցեում գտնվող հողամասը Գրիգոր Վարդանյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
23) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգը ներկայացնելուց հետո Վ. Բաբաջանյանը նաև հայտնեց, որ նախագիծն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել է համայնքապետարանի կայքում, ուղարկվել Ավագանու անդամներին և Մշտական հանձնաժողովներին: Բացի այդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21.1 հոդվածի համաձայն, Ավագանու անդամների կողմից շահերի բախման գրավոր դիմումներ չեն ստացվել:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34 րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 4-Ա որոշմամբ

հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամ Տ.Գեղամյանը հայտնեց, որ իրավական հարցերի հանձնաժողովը ներկա պահին չունի նախագահ և ընթերցեց իրավասու մշտական հանձնաժողովի անդամների կարծիքներն ու առաջարկությունները: Տ. Գեղամյանը մասնավորապես նշեց, որ ինքն անձամբ հանդես է եկել երկու առաջարկությամբ.
1) 165-րդ կետում ավելացնել «սպորտի և այլ բնագավառների» բառերը.
2) 169-րդ կետում նշել, որ շնորհագիրը Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձին հանդիսավոր պայմաններում հանձնում է Համայնքի ղեկավարը և ավագանին:
Զեկուցողը նշեց, որ վերոնշյալ առաջարկներն ընդունելի են, նախագծում կարվեն համապատասխան խմբագրումներ՝ հաշվի առնելով նախագծով առաջարկվող կարգավորումների ընդհանուր տրամաբանությունը:
Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:
Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՄԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՆՁԻՆ ՏՐՎՈՂ ՇՆՈՐՀԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՄՈՒՇԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 123-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 169-րդ կետը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձին տրվող շնորհագրի նկարագրությունն ու նմուշը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել եզրակացություն և հարցը տեղափոխվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԴԱԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՄՈՒՇԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 123-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 170-րդ կետը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի մեդալի նկարագրությունն ու նմուշը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի մեդալով պարգևատրման կարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել եզրակացություն և հարցը տեղափոխվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125-Ա/

**Լսեցին**

***ԳԱԳԻԿ (ՏԵՐ ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱ) ԳՐԻԳՈՐԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 123-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 165-րդ կետի, հաշվի առնելով Աբովյան համայնքի հոգևոր կյանքում և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դերի բարձրացման գործում Աբովյանի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հոգևոր հովիվ Գագիկ (Տեր Մաշտոց քահանա) Գրիգորի Բաբայանի ներդրած մեծ ավանդը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյանի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հոգևոր հովիվ Գագիկ (Տեր Մաշտոց քահանա) Գրիգորի Բաբայանին շնորհել Աբովյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջարկվեց հարցի քննարկմանն անդրադառնալ հանրային լսումներ կազմակերպվելուց, ժողովրդի կարծիքը լսելուց հետո՝ հաշվի առնելու այն:

Զեկուցողը նշեց, որ նման հարցերի քննարկումը հանրային լսումներ կազմակերպելու ընթացակարգ չի նախատեսում: Բացի այդ, Ավագանու անդամը, որպես առաջնային մանդատով օժտված պաշտոնյա, կարող է ինքնուրունաբար արտահայտել իր կարծիքը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել եզրակացություն և հարցը տեղափոխվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126-Ա/

**Լսեցին**

***«ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/***

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 67-68-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի, 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Լուծարել «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. Համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ստեղծել լուծարման հանձնաժողով, հաստատել լուծարման միջանկյալ հաշվեկշիռը և լուծարման հաշվեկշիռը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովի անդամներն արտահայտվել են կողմ:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ա/

**Լսեցին**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 204-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 02-ի N Ք-6616), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար հաստատելու մասին» N 204-Ա որոշմամբ հաստատված հավելված 11-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ա/

**Լսեցին**

## *«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի հուլիսի 23-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «Ա.Ա.Բ. Պրոեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 18-ի N S-1184), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «Ա.Ա.Բ. Պրոեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի՝ Արամուս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող բազալտների երևակման շուրջ 15.28 հա տարածքի վրա, կատարելու

երկրաբանահետախուզական աշխատանքներ, այն գնահատելու որպես հումք՝ խճի արտադրության համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները առաջարկեցին, որ նախագծի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, բացի էլեկտրոնային տարբերակներից, տրամադրվեն նաև թղթային տարբերակներով: Պատասխանվեց, որ առաջարկությունն ընդունվեց ի գիտություն:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129-Ա/

**Լսեցին**

***«ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի հուլիսի 19-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 11-ի N S-1142), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Տալ նախնական համաձայնություն «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի՝ Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի 15/10 հասցեում, բնակելի համալիր կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 102-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով «ԱՐՔԱՐԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2024 թվականի մայիսի 7-ի N Տ-895 գրությանը ի լրումն ներկայացված 2024 թվականի հուլիսի 9-ի գրությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի ««ԱՐՔԱՐԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին» N 102-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «օգտարար հանածոյի արդյունահանման» բառերը փոխարինել «ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն և հարցը տեղափոխվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 123-Ա ԵՎ N 124-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԵՐՈՒԺԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 22-ի «Համայնքային փողոցների լուսավորության համակարգի կառուցում» N 123-Ա և 2023 թվականի օգոստոսի 22-ի «Համայնքային փողոցների գազաֆիկացում» N 124-Ա որոշումներով հաստատված ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերին 2025 թվականի բյուջետային

տարվա համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկում ծավալվեց Աբովյան քաղաքի որոշ տարածքներում խելացի լուսացույցեր և անցումների վրա լուսավորության սարքեր տեղադրելու մասին:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132-Ա/

**Լսեցին**

***ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՀՐԱՎԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

***/Զեկ. ՄԵՐՈՒԺԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի 10-րդ մասի Աբովյան համայնքի ավագանին
***որոշում է՝***
1.Հավանություն տալ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հրավերին (կցվում է):
2. Համաձայնություն տալ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում Աբովյան համայնքի մասնակցության հայտերին (հայտերը կցվում են):
3. Համաձայնություն տալ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից համայնքի ներկայացրած ծրագրերի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 20% համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿՈՅՈՒՂՈՒ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԵՐՈՒԺԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ներհամայնքային ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Մարգարիտա Հարությունյանն անդրադարձավ Աբովյան քաղաքի Ն.Վանյանի անվան թիվ 5 դպրոցի հատվածում կոյուղագծի վերանորոգման հարցին՝ ընդհուպ մինչև դպրոցի դիտահորեր:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԵՐՈՒԺԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Տ. Գեղամյանն առաջարկեց հնարավորության դեպքում քննարկել և ծրագրում ընդգրկել նաև Հանրապետության պողոտայի և Նաիրյան փողոցի մայթերի բարեկարգման հարցը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ մեծ աշխատանքներ են տարվում համայնքի շարունակական բարեկարգման ուղղությամբ, իսկ առաջարկի քննարկման նպատակահարմարությանն անդրադարձ կարվի գալիք տարվա բյուջեի քննարկման շրջանակներում:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ) ՄԱՅԹԵՐԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԵՐՈՒԺԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ներհամայնքային (տեղական նշանակության) մայթերի ասֆալտբետոնե ծածկով հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Հեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարելու մասին» N 217-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝ որոշման 1-ին կետում 223-րդ տողից հետո լրացնել նոր՝ 224-244-րդ տողերով.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 224 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան 28/7 հողամաս | 29,0 | 07-002-0050-0346 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 475.0 |
| 225 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան 16/3 հողամաս | 33,2 | 07-002-0058-0420 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 540.0 |
| 226 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 6-րդ մկշ. 2-րդ թաղամասի 1 հողամաս | 538,88 | 07-002-039-345 | բնակավայրերի | տնամերձ | 2 395.0 |
| 227 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 6-րդ մկշ., 1-ին թաղ., թիվ 83 հողամաս | 559,85 | 07-002-039-377 | բնակավայրերի | տնամերձ | 2 490.0 |
| 228 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 6-րդ մկշ., 1-ին թաղ., թիվ 86 հողամաս | 510,0 | 07-002-039-379 | բնակավայրերի | տնամերձ | 2 270.0 |
| 229 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 6-րդ մկշ., 3-րդ թաղ., թիվ 5 հողամաս | 519,32 | 07-002-039-390 | բնակավայրերի | տնամերձ | 2 310.0 |
| 230 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամաս, 88/2 հողամաս | 554,1 | 07-002-0029-0046 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 3 790.0 |
| 231 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, 80/4 | 280,0 | 07-002-0025-0256 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1 915.0 |
| 232 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս 14/12 հողամաս | 104,0 | 07-002-0103-0245 | արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական օբյեկտների | 465.0 |
| 233 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սարալանջի փողոց 11/10 | 96,9 | 07-002-0090-0172 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1 020.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 234 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց 148/7 հողամաս | 665,1 | 07-002-0036-0714 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 4 550.0 |
| 235 | Համայնք Աբովյան, գ. Առինջ, Խ. Աբովյան թաղամասի 10-րդ փողոց 17/1 հողամաս | 153,7 | 07-011-0358-0137 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1 620.0 |
| 236 | Համայնք Աբովյան, գ. Գեղաշեն, 3-րդ թաղամասի 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2/2 | 1192,9 | 07-023-0016-0013 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1 460.0 |
| 237 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս, 12-րդ փողոց, 12 հողամաս | 1231,1 | 07-035-0143-0055 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 315.0 |
| 238 | Համայնք Աբովյան, գ. Առինջ, Վ. Տերյան թաղամասի 1-ին փողոց, 7/1 հողամաս | 82,4 | 07-011-0154-0234 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 870.0 |
| 239 | Համայնք Աբովյան, գ. Առինջ, Մ. Մկրտչյան թաղամասի 4-րդ փողոց, 14 | 1343,9 | 07-011-0154-0233 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 14 135.0 |
| 240 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամաս 122/20 | 119,2 | 07-002-0029-0012 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 820.0 |
| 241 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 2-թաղամաս 122/19 | 446,2 | 07-002-0032-0069 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 3 055.0 |
| 242 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ մկշ.մ թիվ 9/79 հողամաս | 19,8 | 07-002-036-095 | բնակավայրերի | ավտոտնակի կառուցապատման | 140.0 |
| 243 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4 մկշ., թիվ 9/77 հողամաս | 19,8 | 07-002-036-060 | բնակավայրերի | ավտոտնակի կառուցապատման | 140.0 |
| 244 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ մկշ., թիվ 9/78 հողամաս | 19,8 | 07-002-036-096 | բնակավայրերի | ավտոտնակի կառուցապատման | 140.0 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. Քոսակյանը հայտնեց, որ հանձնաժողովի նիստի ընթացքում հանձնաժողովն առաջարկել է աճուրդի դրվող հողամասերի ցանկի 224-րդ, 225-րդ, 232-րդ, 238-րդ, 240-րդ տողերում ներառված հողամասերի մեկնարկային գները բարձրացնել:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՁԵԿ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2024 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0128-0349 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին

***որոշում է՝***

1.Համաձայնություն տալ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 2024 թվականի ընթացքում, մրցութային կարգով, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, 20 000 (քսան հազար) դրամ տարեկան վարձավճարի մեկնարկային գնով, տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի մարտի 21-ի N 21032024-07-0138 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0349 կադաստրային ծածկագրով 0.05844 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր (5-րդ կարգ, ՈՒրց-Կոտայք-Շամիրամ գնահատման գոտի) հողատեսքի հողամասը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. Քոսակյանը հայտնեց, որ հանձնաժողովի նիստի ընթացքում հանձնաժողովն առաջարկել է հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 20 000 (քսան հազար) դրամից դարձնել 50 000 (հիսուն հազար):

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 7 ՇԵՆՔԻ ԹԻՎ 80, 81 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հուլիսի 06-ի թիվ «129Բ-Վ-023» անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 1 520 000 (մեկ միլիոն հինգ հարյուր քսան հազար) դրամ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռազմիկ Դոխոյանը 1984 թվականից բնակվում է Աբովյան քաղաքի Հանրակացարա նային թաղամասի 7 շենքի թիվ 80, 81 բնակարանում, հիմք ընդունելով Ռազմիկ Դոխոյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի հուլիսի 08-ի N Ք-4900), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի ապրիլի 12-ի N 12042019-07-0082 վկայական) Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 7 շենքի 33.06 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 80, 81 բնակարանն ուղղակի վաճառքով՝ 1 520 000 (մեկ միլիոն հինգ հարյուր քսան հազար) դրամով, օտարել Ռազմիկ Գեորգիի Դոխոյանին:
2. Ռազմիկ Դոխոյանը պարտավոր է վճարել.
1) Աբովյանի համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին 1 520 000 (մեկ միլիոն հինգ հարյուր քսան հազար) դրամ՝ բնակարանի գինը,
2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ բնակելի տարածքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար:
3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռազմիկ Դոխոյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռազմիկ Դոխոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշվեց հարցը թողնել հաջորդ նիստի քննարկմանը փաստաթղթերը լրամշակելու նպատակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ տվել է դրական եզրակացություն:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0 Չի քվեարկել-24

Որոշումը չի ընդունվել:

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 3 ՇԵՆՔԻ ԹԻՎ 14 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/*

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ֆլորա Սահակյանի ընտանիքը 1975 թվականից բնակվում է Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին փողոցի 3 շենքի թիվ 14 բնակարանում, հաշվի առնելով Ֆլորա Սահակյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 27-ի N Ք-4665), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2010 թվականի հուլիսի 16-ի N 2672576 վկայական) Բալահովիտ գյուղի 1-ին փողոցի 3 շենքի 70.45 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 14 բնակարանն անհատույց օտարել Ֆլորա Սարգսի Սահակյանին:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ֆլորա Սահակյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ֆլորա Սահակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/*

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 685-687-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հաշվի առնելով ««Նանե» բարեգործական միություն» հասարակական կազմակերպության նախագահի գրությունը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 27-ի N Տ-1266), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հունիսի 12-ի N 12062023-07-0183 վկայական) Աբովյան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 33 հասցեում գտնվող, Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրակցված շենքի 2-րդ հարկից 62.85 քառակուսի մետր մակերեսով տարածքը 3 (երեք) տարի ժամկետով,

անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ««Նանե» բարեգործական միություն» հասարակական կազմակերպությանը (հատակագիծը կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ պայմանագիր կնքելու, դրանում փոփոխություններ կատարելու և լուծելու մասին որոշումներն ընդունում է Աբովյան համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են ««Նանե» բարեգործական միություն» հասարակական կազմակերպության կողմից:
4. Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. Քոսակյանը հայտնեց, որ հանձնաժողովի նիստի ընթացքում հանձնաժողովն առաջարկել է վարձակալության 3 տարի ժամկետը դարձնել 1 տարի:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 141-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հաշվի առնելով Աբովյան համայնքի «Վերին Պտղնի գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Մարտիրոսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի օգոստոսի 30-ի N S-1710), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հունիսի 01-ի N 01062023-07-0181 վկայական) Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի 1-ին փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 395,34 քառակուսի մետր մակերեսով մանկապարտեզը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 07-062-0005-0070 կադաստրային ծածկագրով 222,1 քառակուսի մետր մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Աբովյան համայնքի «Վերին Պտղնի գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային

կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:
2. Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն:
3. Հանձնարարել Աբովյան համայնքի «Վերին Պտղնի գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել որոշման կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 142-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն և N 199-Ն որոշումների, հիմք ընդունելով Գրիգոր Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի օգոստոսի 30-ի N Ք-6587), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Գրիգոր Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի օգոստոսի 28-ի N 28082024-07-0038 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 07-002-0049-0861 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 24,48 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի փետրվարի 20-ի N 20022024-07-0174 վկայական) Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 9 հասցեում գտնվող 07-002-0049-0839 կադաստրային ծածկագրով 12,1 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0049-0861 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Գրիգոր Սեդրակի Վարդանյանին:
2. Գրիգոր Վարդանյանը պարտավոր է՝
1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 195 737

(հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր երեսունյոթ) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.
2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Գրիգոր Վարդանյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գրիգոր Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143-Ա/

Նախքան օրակարգի վերջին հարցին անդրադառնալը, Վ. Բաբաջանյանն արեց երկու հայտարարություն: Նախ, ավագանու անդամներին ևս մեկ անգամ տեղեկացրեց, որ սեպտեմբերի 12-13-ը ՀՀ ՏԿԵՆ և ԱՄՆ ՄԱԶԾ գործակալության կողմից իրականացվում է ավագանու անդամների վերապատրաստման դասընթաց, որի անցկացման վայրն է համայնքապետարանի նիստերի դահլիճը: Ձեկուցողը հորդորեց ավագանու անդամներին՝ ներկա գտնվել և ակտիվ մասնակցել դասընթացին:
Երկրորդ, կատարվել է ավագանու նախորդ նստաշրջանի նիստերի, մշտական հանձնաժողովների նիստերի հաճախելիության, ինչպես նաև քվեարկությունների հաշվարկ: Ավագանու հաջորդ նիստին քննարկմանը կներկայացվեն հարցեր՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան:

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Ձեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 11-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 144 -Ա/

Ավագանու անդամներ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՐԵԺ ՄԱՄՈՒԼՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԵՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____